«Հաստատում եմ»
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր,
տեխն.գ.դ., պրոֆեսոր _____ Ռ.Ռ. Սահակյան
14.06 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լուիզա Իվանի Մարաբյանի՝ «Գենդերային ագրեսիան հեռուստաբանավեճերում» խորագրով Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Լուիզա Իվանի Մարաբյանի՝ «Գենդերային ագրեսիան հեռուստաբանավեճերում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Օտար լեզուների և գրականության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 18, կայացած՝ 11.06.2024թ.):

Մասնակցում էին «Օտար լեզուների և գրականության» ամբիոնի բ.գ.թ., դոցենտներ Թ.Թադևոսյանը, Ն. Ջաղինյանը, Ս.Բաբայանը, Կ.Առուստամյանը, Լ.Վարդանյանը, Գ. Դոխոլյանը, Ժ.Ալոյանը, բ.գ.թ., ասիստենտներ Ա.Սիմոնյանը, Է. Զոհրաբյանը, մ.գ.թ., դոցենտներ Ա.Պապոյանը, Գ.Հովհաննիսյանը:

Բոլոր ժամանակներում ագրեսիան իր տարբեր դրսևորումներով մշտապես եղել է ձևավորված հասարակության վարքագծի բաղկացուցիչ մասը:

Մարդկային կյանքը անհնար է պատկերացնել առանց կոնֆլիկտների և հակասությունների, որոնք կարող են սկսել անձնական ամենապարզ հարցերից և հասնել մինչև բարդ հակամարտություն: Ագրեսիայի դրսևորումները հատկապես տեսանելի են

քաղաքական խոսույթում, որտեղ ընդդիմադիր կողմերը կարող են գործածել միմյանց վիրավորելու, անվանարկելու ամենատարբեր լեզվական և արտալեզվական միջոցներ:

XX դարի 60-ական թվականներից ամերիկյան նախագահների նախընտրական քարոզարշավները լայն տարածում գտան հեռուստատեսային բանավեճերի ձևաչափով, որն էլ դարձավ հաջողության հասնելու հիմնական նախապայմաններից մեկը:

Հեռուստատեսային բանավեճերը, որպես քաղաքական խոսույթի դրսևորում, լայնորեն տարածված են ժամանակակից հեռուստատեսության քաղաքական և ժամանցային հաղորդումների մեջ, որոնցում հաճախ տեսանելի են գենդերային ագրեսիային բնորոշ տարրեր:

Լուիզա Մարաբյանի ատենախոսությունը նվիրված է գենդերային ագրեսիայի վերլուծությանը հեռուստաբանավեճերում:

Այն կազմված է ներածությունից, երեք գլուխներից, դրանց հաջորդող համապատասխան ենթագլուխներից, ծանոթագրություններից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակն անդրադառնում է ագրեսիա երևույթին՝ դիտարկելով այն որպես միջգիտակարգային բարդ երևույթ: Այս բաժնում ներկայացվում է նաև ատենախոսության թեմայի նորույթը, արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները:

Աշխատանքն արդիական է, քանի որ առնչվում է մարդկային վարքագծի ամենատարածված երևույթներից մեկին՝ ագրեսիային, ինչը կապվում է նաև արդի լեզվաբանության մեջ լայն տարածում գտած գենդերային հայեցակերպի առանձնահատկությունների ուսումնասիրության հետ: Արժանահիշատակ է այն հանգամանքը, որ աշխատանքը քննվում է «ագրեսիվ վարքագծի» համակարգային մոտեցման դիտանկյունից՝ համադրելով դրա տարբեր փոփոխականները և դրանց յուրահատկությունները:

Ատենախոսությունը նորույթ է՝ պայմանավորված «ագրեսիա» և «ատելության խոսք»-ի միջգիտակարգային ուսումնասիրությամբ՝ հանրամշակութաբանության, կառուցվածքային և գենդերային լեզվաբանության զուգադրական վերլուծությամբ:

Հետազոտության օբյեկտի ընտրությունը՝ գենդերային կարծրատիպերի դրսևորումները քաղաքական հեռուստատեսային բանավեճերում, նույնպես աշխատանքի նորույթ ու հենքակառուցվածքային մասն է:

Ուշադրության է արժանի նաև գենդերային հայեցակերպի դիտանկյունից խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային բաղադրիչների ուսումնասիրությունը քաղաքական հեռուստաբանավեճերում:

Առաջին գլխում՝ «Գենդերային տեսության և հաղորդակցության հիմնախնդիրները քաղաքական խոսույթում», քննում է կանանց և տղամարդկանց հաղորդակցական վարքագծի առանձնահատկությունները քաղաքական խոսույթում՝ հաշվի առնելով հաղորդակցական մտադրությունը, ռազմավարությունը և մարտավարությունը: Այս գլուխը անդրադառնում նաև «վարկաբեկող խոսքի» ու «ատելության խոսքի» օրինաչափություններին, կանանց և տղամարդկանց հաղորդակցական ռազմավարություններին՝ լուսաբանելով ոլորտում հայտնի լեզվաբանների տեսակետները և ուսումնասիրությունները: Աշխատանքում դիտարկվում են նաև քաղաքական հեռուստաբանավեճերում գենդերային կարծրատիպերի առանձնահատկությունները:

Գլուխ 2՝ «Ագրեսիայի դրսևորման գենդերային առանձնահատկությունները քաղաքական բանավեճում», քննում է գենդերային ագրեսիայի տարատեսակներն ու դրանց դրսևորումները, որոնցում անդրադարձ է կատարվում նաև հեռուստաբանավեճերում կին և տղամարդ քաղաքական գործիչների խոսքային ագրեսիվ վարքի լեզվական առանձնահատկությունների դրսևորումները լուսաբանելուն՝ լրացնելով պատկերավոր և հետաքրքրաշարժ օրինակներով: Եզրահանգվում է, որ ագրեսիվ խոսքի ընկալման մեջ քաղաքական գործչի սեռը էական դեր չի խաղում: Միջանձնային հակամարտություններում խոսքային ագրեսիան բացասական ազդեցություն է ունենում խոսակիցների խոսողների գնահատականների վրա:

Բանավեճերի ընթացքում կին մասնակիցների վարքագիծը, հատկապես ագրեսիվ խոսք օգտագործելիս, նույնքան անպատշաճ է համարվել, որքան արական սեռի ներկայացուցիչներինը:Քաղաքական բանավեճերում թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ կիրառում են հուզարտահայտչական տարբեր պարունակող շարահյուսական և բառային

միջոցներ: Զայրույթի, զարմանքի, տագնապի և անհանգստության հուզեվիճակներում երկու սեռի ներկայացուցիչներն էլ օգտագործում են մեծ թվով ուժգնացնող բառեր, կրկնություններ, անձնական դերանուններ, հոետորական հարցեր, փոխաբերություններ և համեմատություններ:

Գլուխ 3՝ վերնագրված է «Խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային ագրեսիայի դրսևորումները քաղաքական հեռուստաբանավեճերում»: Հատկանշանական է այն հանգամանքը, որ ատենախոսը այս գլխում անդրադարձել է գենդերային տարբերությունների դրսևորումներին «ատելության խոսքում», քանի որ այն դիտարկվում է որպես ագրեսիայի ամենաարտահայտիչ դրսևորումներից մեկը:

Սույն գլուխը, նույնպես, պատկերավոր կերպով դիտարկում է կին/տղամարդ քաղաքական գործիչների ատելության խոսքի դրսևորումները՝ եզրահանգելով, որ տղամարդ քաղաքական գործիչները իրենց ելույթներում, հարցազրույցներում և թվիթերյան գրառումներում հաճախ են օգտագործում «ատելության խոսք»՝ այնպիսին, ինչպիսիք են հայհոյանքը, զրպարտանքը և վիրավորանքը:

Գծապատկերներով ներկայացվում է վիրավորանք և ատելության խոսք պարունակող բառերի գործածությունը տղամարդ և կին քաղաքական գործիչների խոսքում:

Եզրակացություններում ամփոփվում են աշխատանքի արդյունքները: Ատենախոսը նշված բաժնում տարանջատում է ստացված արդյունքները՝ ներկայացնելով իր կողմից դիտարկված խնդիրների խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային պատկերներն ու գծապատկերները:

Աշխատանքը իր ձևաչափի մեջ արժեքավոր ենք համարում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ատենախոսը քննել է ագրեսիայի դրսևորումները գենդերային լեզվաբանության դիտանկյունից, կատարել մանրակրկիտ ու հետաքրքրաշարժ վերլուծություններ: Այս հանգամանքը ներկայացնում է աշխատանքը շահեկան դիրքերից:

Ատենախոսը, գործի դնելով բանասերի՝ իր հենքային կարողությունը և հետևողական հետաքրքրասիրությունը, հետազոտվող նյութը ներկայացնում է հստակ ու համապարփակ ձևով, կատարում հիմնավորված վերլուծություններ և եզրահանգումներ:

Ատենախոսն ուսումնասիրել է թեմային առնչվող տեսական մեծածավալ գրականություն երեքից ավել լեզուներով:

Ատենախոսությունը իր ձևի և բովանդակության տեսակետից, հատկանշական ու արժեքավոր նյութ է պարունակում թե՛ տեսական ու գործնական և թե՛ իմաստային ու կառուցվածքային առումներով: Այնուամենայնիվ, կցանկանայինք նշել որոշ նկատառումներ, որոնց անդրադառնալու պարագայում աշխատանքը միանշանակ կշահեր:

❖ Կցանկանայինք պարզել, թե ինչ սկզբունքով են ընտրվել և վերլուծության ենթարկվել քաղաքական գործիչները հեռուստաբանավեճերում՝ հայտնիությա՞ն, ազգայի՞ն պատկանելության, գաղափարախոսությա՞ն, քաղաքակա՞ն հայացքների, թե՞ ընտրությունը պայմանավորված է այլ հանգամանքներով:

❖ Ի՞նչ տրամաբանությամբ են վերլուծվել, օրինակ, ամերիկյան և բրիտանական քաղաքական գործիչների շարքում Մոլդովայի նախկին և ներկա նախագահներ Իգոր Դոդոնի և Մայա Սանդուի, ինչպես նաև Ֆրանսիայի «Վերածնունդ» սոցիալ-լիբերալ քաղաքական կուսակցության թեկնածու Էմանուել Մակրոնի և «Ազգային միավորում» ծայրահեղ-պահպանողական ազգայնական կուսակցության թեկնածու Մարին Լը Պենի միջև տեղի է ունեցած հեռուստաբանավեճը:

❖ Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե, այնպես, ՌԴ ԱԳ նախագահ՝ Սերգեյ Լավրովի և նրա բրիտանացի պաշտոնակցի՝ Դեյվիդ Միլիբենդի «ատելության խոսքի» դրսևորումներով ներկայացված օրինակի վերլուծության մեջ ատենախոսը ներկայացներ երկու բանախոսների զրույցի ավելի լայն և թափանցիկ համատեքստ: Այդ դեպքում ստացված արդյունքները ավելի նկատելի կլինեին, ինչպես կատարվել է վերը նշված նշված Էմանուիլ Մակրոնի, Իգոր Դոդոնի, Ռիշի Սունակի հեռուստաբանավեճերի վերլուծության պարագայում:

❖ Գլուխ 2-ում ատենախոսը բերում է բանավեճի մի օրինակ, որտեղ Մայքլ Բենեթը հանդես է գալիս սուր ակնարկով (a complete victory for the Tea Party): Այս առումով, մեր կարծիքով,աշխատանքը կշահեր, եթե զուգահեռներ անցկացվեին տվյալ իրադրական խոսքային իրավիճակի ընկալման և Tea Party պատկերավոր համեմատության միջև և ծանոթագրություններում անդրադարձ կատարվեր Tea Party բառակապակցությանը, որը

պատմության մեջ հայտնի է որպես Բոստոնում/1773թ/ ամերիկացի գաղութարարների կողմից կազմակերպած քաղաքական բողոքի ակցիա՝ ընդդեմ Բրիտանիայի թեյի վրա դրված հարկերի պարտադրման, որի արդյունքում նավահանգիստ նետվեց 342 տուփ թեյ՝ ներմուծված բրիտանական Արևելյան հնդկական ընկերության կողմից:

❖ Կցանկանայինք նշել նաև, որ վերլուծված օրինակների տեսողական առանձնացումը ընդհանուր տեքստից ավելի նպատակահարմար կլիներ:

❖ էջ 12, 21՝ «այն բանով» արտահայտությունը նպատակահարմար է փոխարինել այլ արտահայտությամբ՝ «այն հանգամանքով /այն իրողությամբ», էջ 154 նկատվել է տեխնիկական բացթողում՝ «ածականները»:

Եզրակացություն

Վերը նշվածն ամենևին չի նսեմացնում Լուիզա Մարաբյանի կողմից կատարված հետազոտության գիտական արժեքն ու նշանակությունը, դրա իմաստային ու կառուցվածքային արժեքն ու կշիռը: Ատենախոսությունը ամբողջովին բավարարում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, ուստի ատենախոս Լուիզա Մարաբյանը արժանի է ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Օտար լեզուների և գրականության
ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Թ.Վ. Թադևոսյան

Թ. Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ

ՎՊՀ- ի գիտքարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Բեժանյան